ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

# Փորձառության ուղեցույց ուսանողների համար



# 1. ՄԻՆՉԵՎ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

# ԻՆՉՊԵ՞Ս ԸՆՏՐԵԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ

Ուսումնասիրել https://moodle.asue.am/ և https://asue.am/am կայքերում ներկայացված ՀՊՏՀ գործընկեր-կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը, փորձառության ընտրության կարգերն ու ակնկալվող վերջնաարդյունքները:

Խորհրդակցել ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի ղեկավարի հետ՝ համոզվելու համար, որ փորձառության վայրը համապատասխանում է Ձեր հետազոտության շրջանակին:

Վերջնական ընտրությունը կայացնելու դեպքում https://moodle.asue.am/ կայքում ներկայացված ցանկում ընտրել կազմակերպությունը:



Ի՞նչ անել, երբ Ձեր նախընտրած կազմակերպությունը չկա ներկայացված ցանկում, իսկ Դուք այնտեղ աշխատում եք

***HTTPS://MOODLE.ASUE.AM/*** **ԿԱՅՔՈՒՄ ՈՐՊԵՍ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆՏՐԵԼ «ԱՇԽԱՏՈՒՄ ԵՄ ԱՅՍՏԵՂ ԵՒ ՆԱԽԸՆՏՐՈՒՄ ԵՄ ԱՆՑՆԵԼ ԻՄ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԻՄ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ՏԱՐԲԵՐԱԿԸ, ՄՈՒՏՔԱԳՐԵԼ ՁԵՐ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ:**

**ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌՆՎԱԶՆ *10* ՕՐ ԱՌԱՋ ՁԵՐ ԱՄԲԻՈՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՁԵՐ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻՑ ՏԵՂԵԿԱՆՔ**

ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՒԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՀԱՎԵԼՎԱԾ 1-ՈՒՄ:

## Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵՐԲ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՑԱՆԿՈՒՄ, ՍԱԿԱՅՆ ԴՈՒՔ ԱՅՆՏԵՂ ԵՔ ՈՒԶՈՒՄ ԵՔ ԱՆՑՆԵԼ ՁԵՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ:

# ԴՐՍԵՎՈՐԵԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՂՋՈՒՆԵԼԻ Է ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՁԵԶ ՀԵՏԱՔՐՔՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼԸ՝ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ՏՎՅԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ:
ԱՅՍ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ, ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌՆՎԱԶՆ 10 ՕՐ ԱՌԱՋ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՁԵՐ ԱՄԲԻՈՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ, ՈՐԻ ՕՐԻՆԱԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՀԱՎԵԼՎԱԾ 2-ՈՒՄ:

HTTPS://MOODLE.ASUE.AM/ ԿԱՅՔՈՒՄ ՈՐՊԵՍ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆՏՐԵԼ «ՉԵՄ ԱՇԽԱՏՈՒՄ ԱՅՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՍԱԿԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԵԼ ԵՄ ԱՆՑՆԵԼ ԻՄ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՏԵՂ:» ՏԱՐԲԵՐԱԿԸ, ՄՈՒՏՔԱԳՐԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ:

# Ո՞Ր ՊԱՐԱԳԱՅՈՒՄ Է ՀՆԱՐԱՎՈՐ ԸՆՏՐԵԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՎԱՅՐ





**ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՎԱՅՐ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ԸՆՏՐԵԼ ՄԻԱՅՆ ԱՅՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ, ԵՐԲ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐԻՑ ՄԵԿԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ Է:**

# Ինչպե՞ս է կազմակերպվում մրցութային փորձառությունը

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՈՐՈՇՈՒՄ Է ԳՈՐԾԸՆԿԵՐ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԱԽՕՐՈՔ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՎ ՁԵԶ։

ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ Է ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ, ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՄ ԵՐԿԱՍՏԻՃԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ։

ՄՐՑՈՒՅԹԸ ՉՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԴՈՒՔ ԳՆՈՒՄ ԵՔ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՎԱՅՐ։

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՎՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹԻ ՕՐՎԱՆԻՑ ՀԵՏՈ ՄԵԿ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ։



# 2. ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# Ի՞ՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԵԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

ԱՄԲԻՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԿԱՄ ՎԵՐՋԻՆԻՍ ՈՒՂՂՈՐԴՄԱՄԲ՝ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՆԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ:

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ՆԵՐԿԱՅԱՆԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ՝ ՀՍՏԱԿԵՑՆԵԼՈՎ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ:

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՄՇԱԿԵԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՁԵՒԱՉԱՓԸ ԵՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

# Ի՞ՆՉԸ ԿՕԳՆԻ ՁԵԶ ՈՒՆԵՆԱԼ ԱՐԴՅՈՒՎԵՏ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Փորձառության վայրն ընտրելիս պետք է հաշվի առնել ոչ թե կազմակերպության հայտնիությունը, այլ Ձեր հետազոտական ոլորտի հետ ընդհանրություններն ու փորձը:

Փորձառության ընթացքում պետք է դրսևորել պատասխանատվություն, պատրաստակամություն և նախաձեռնողականություն՝ ներգրավվելով կազմակերպության ընթացիկ աշխատանքներին:

Պետք է հիշել, որ փորձառության վայրը նախատեսված է, առաջին հերթին, գործնական հմտություններ ու կարողություններ ձեռք բերելու, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվություն ստանալու համար:

Պետք է պարբերաբար կապի մեջ լինել ամբիոնի կողմից նշանակված ղեկավարի և ՀՊՏՀ Կարիերայի կենտրոնի հետ:

# ԻՆՉՊԵ՞Ս Է ՁԵԶ ԱՋԱԿՑԵԼՈՒ ԱՄԲԻՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՂԵԿԱՎԱՐԸ

ԱՄԲԻՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՂԵԿԱՎԱՐԸ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ Է ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ:

ԱՄԲԻՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՂԵԿԱՎԱՐԸ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ Է ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ:

ԱՄԲԻՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՀՍՏԱԿԵՑՎԵԼՈՒ Է ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ԱՄԲԻՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՂԵԿԱՎԱՐԸ ՁԵԶ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՏԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՒԱՉԱՓԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:



ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄ ՉԻ ԵՆԹԱԴՐՈՒՄ, ՀԵՏԵՒԱԲԱՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՑԱՆԿԱՑԱԾ ԽՆԴՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏՔ Է ԴԻՄԵԼ ԱՄԲԻՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԱՄ ՀՊՏՀ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ։

# Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵՐԲ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵՆ ԵԿԵԼ ԽՆԴԻՐՆԵՐ

## ԴԻՄԵԼ ՀՊՏՀ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՐԲ՝

ՁԵՐ ԸՆՏՐԱԾ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՅՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՁԵՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ:

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ՈՐԵՎԷ ՊԱՀԻՆ, ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՁԵՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ:

## ԴԻՄԵԼ ՀՊՏՀ ԱՄԲԻՈՆԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ, ԵՐԲ՝

ՁԵՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵՆ ԵՂԵԼ ԽՆԴԻՐՆԵՐ ԿԱՊՎԱԾ ՁԵՒԱՉԱՓԻ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ԿԱՄ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ Ղ ԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ:

ՁԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ, ՆԿԱՐԱԳՐԻ, ԲՆՈՒԹԱԳՐԻ ԿԱՄ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ:



# 3. ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ

# Ի՞ՆՉ Է ՁԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԵԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ

3-5 ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՄԲԻՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԵՏԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ:

3-5 ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՀՊՏՀ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՌՑԱՆՑ ՀԱՐՑՄԱՆԸ:

ԱՄԲԻՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՕՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ՝ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՄ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԴԻՄԵԼ ՀՊՏՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԵՒ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԻՆ, ԳՐԵԼ ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԷՋԻՆ ԿԱՄ CAREER.CENTER.ASUE@GMAIL.COM ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵԻՆ: